

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Դարիբյան	ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
Տ. Հարությունյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Ալեքսանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Վ. Զիլավյան	ՀՀ սիյուռքի նախարարի տեղակալ
Ռ. Հարությունյան	<<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Գրիգորյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
Հ. Մուսայելյան	<<Սինոփսիս Արմենիա>> ընկերության գլխավոր տնօրեն
Հ. Ավոյան	<<Սորսիո>> ՓԲԸ-ի տնօրեն
Վ. Մասարաջյան	<<Վիասֆեր Տեխնոպարկ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Բ. Ենգիբարյան	<<Ձեռնարկությունների ինկուբատոր>> հիմնադրամի տնօրեն
Գ. Բարսեղյան	<<Մայքրոսֆթ Արեյ>> ՄՊԸ-ի տնօրեն
Ա. Բաղդյան	<<Յունիքոմփ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Օ. Տիխովա	<<Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա>> ՀԿ-ի նախագահ
Վ. Աբազյան	<<Նորք>> Տեղեկատվավերլուծական կենտրոն>> ՓԲԸ-ի

տնօրեն

Ա. Թառոյան <<Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Մարի Լուի Փափազյան <<ԷՓԻՋԻ Լեքս ԱՄԱԲ>> ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն, ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Տ. Դավթյան ՀՀ Էկոնոմիկայի նախարար

Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Կ. Մինասյան ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Ռ. Ալավերդյան ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ

Լ. Հունանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ա. Հարությունյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ

Ա. Քուչուկյան <<Երևանի մաթեմատիկական մեքենաների>> ԳՀԻ տնօրենի տեղակալ

Դ. Սանդուխյան <<Արմենտել>> ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն

Հ. Խանջյան <<Բի Լայն>> ՍՊԸ-ի նախագահ

Վ. Հովհաննիսյան «Օրանժ Արմենիա» ծրագրի կոորդինատոր

Վ. Հովսեփյան <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն>> հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ

Ա. Սարգսյան <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասագետ

Մ. Սարգսյան <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասագետ

1. Գործարարությամբ զբաղվելու 2013 թվականի համաշխարհային զեկույցը

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

3. **Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հաղորդումը՝ Գործարարությամբ զբաղվելու 2013 թվականի համաշխարհային զեկույցի և այդ զեկույցում Հայաստանի դիրքի բարելավման վերաբերյալ:

2. ՀՀ-ում ՏՏ ոլորտի վերջին զարգացումների մասին

(Բ. Ենգիբարյան)

2. **Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն Ձեռնարկատիրությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի զեկույցը ՀՀ-ում ՏՏ ոլորտի վերջին զարգացումների մասին:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ռոտացիոն կարգով ընդգրկված կազմի մասին

(Ա. Գրիգորյան)

2. **Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՏՏԶԱ խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի կողմից ներկայացված խորհրդի՝ ռոտացիոն կարգով ընդգրկված ներկայացուցիչների կազմը:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ սիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Տ. Հարությունյան, Բ. Ենգիբարյան, Հ. Խանջյան, Վ. Հովսեփյան, Ա. Քուչուկյան, Տ. Դավթյան, Ռ. Ալավերդյան, Տ. Սարգսյան)

10. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ փաստացի հաշվետվությունների հիման վրա ներկայացնել վիճակագրություն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների

ձեռնարկությունները որքան գումար են ծախսում կադրերի վերապատրաստման համար և ըստ անհրաժեշտության համապատասխան որոշման նախագիծ ներկայացնել նախարարական կոմիտեի քննարկմանը.

2) ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

ա. ՀՀ թվային ժառանգության պահպանման քաղաքականությունն ու ռազմավարությունը մշակելու և առաջնահերթ միջոցառումների ցանկը սահմանելու համար դրամաշնորհի ստանալու ֆինանսական հայտը ուղարկել նիստի մասնակիցներին, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերին (այդ թվում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա)՝ կարծիքներ ստանալու նպատակով, և ըստ այդմ խմբագրել և ներկայացնել ՅՈՒՆԵՍԿՕ-ին,

բ. Նոր ՏՏ ռազմավարության մշակման նպատակով շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ և մինչև 2012 թվականի ավարտը քննարկել և մշակել ճանապարհային քարտեզ ու ներկայացնել խորհրդի նիստի քննարկմանը.

3) Առաջարկել Ձեռնարկատիրությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին՝ հայկական վիկիմեդիայի տնօրեն տկն Ս. Մկրտչյանին ապահովել աշխատանքային տարածքով.

4) ՀՀ քաղաքաշինության նախարար Ս. Թադևոսյանին՝

ա. մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել և վեր հանել օպտիկամալուխային կապուղիների ստեղծմանը խոչընդոտող պատճառները.

բ. իրականացնել համապատասխան վերահսկողություն մասնավոր հատվածի կողմից ներկայացված բողոքների հիման վրա օպտիկամալուխային կապուղիների ստեղծմանը խոչընդոտող պատճառների վերացման նպատակով.

5) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Բազադրյանին՝ էլեկտրոնային առևտրի ներդրման հետ կապված տեխնիկական լուծումների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և իրականացման համապատասխան ժամանակացույց:

5. Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ միջկառավարական պայմանագիր կնքելու անհրաժեշտության մասին

(Վ. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի հետ համատեղ քննարկել

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ միջկառավարական համաձայնագիր կնքելու հարցը, որը հնարավորություն կընձեռի երկկողմ երիտասարդ մասնագետների գործուղել աշխատելու:

6. ՏՀՏ ոլորտի ընկերություններում արտադրական պրակտիկայի անցկացման հետ կապված խնդիրների մասին

(Վ. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ քննարկել ՏՀՏ-ի ոլորտի ընկերություններում ուսանողների և շրջանավարտների արտադրական պրակտիկայի անցկացման հետ կապված խնդիրները և ներկայացնել համապատասխան առաջարկություններ խորհրդի քննարկմանը՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա:

7. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N 1473 որոշման վերաբերյալ առաջարկությունների մասին

(Դ. Մանդուխյան, Ռ. Ալավերդյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ քաղաքաշինության նախարար Ս. Թադևոսյանին՝ ստեղծել աշխատանքային խումբ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ռ. Ալավերդյանի ղեկավարությամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկել բարձրացված հարցը և խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել համապատասխան լուծումներ:

8. ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի վերաբերյալ առաջարկությունների մասին

(Վ. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանին՝ խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի վերաբերյալ պաշտոնական եզրակացություն:

9. <<ԱրմԹեք-2012>> կոնգրեսի կազմակերպչական խնդիրների մասին

(Բ. Ենգիբարյան, Տ. Սարգսյան)

3. **Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն <<Ձեռնարկատիրությունների ինկուբատոր>> հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի զեկույցը <<ԱրմԹեք-2012>> կոնգրեսի կազմակերպչական խնդիրների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ
ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ